



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ **Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի և Կարեն Սարգսյանի,

քննության առնելով «Փաստաբանության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառման հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ **նաև Օրենք**) 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝ ... 6) լրացել է արտոնագրի գործողության կասեցման՝ սույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված ժամկետը:*

Նույն հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ *արտոնագրի գործողությունը դադարեցնում է փաստաբանների պալատի խորհուրդը, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված դեպքերում՝ փաստաբանների պալատի նախագահը՝ այն ուժը կորցրած ճանաչելով:*

Օրենքի՝ մինչև 22.02.2020 թվականը գործող խմբագրությամբ 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում էր հանրային ծառայության մեջ գտնվելու հիմքով արտոնագրի կասեցման հնարավորություն՝ հանրային ծառայության (պետական ծառայության, համայնքային ծառայության) մեջ գտնվելու՝ բայց ոչ ավելի, քան 5 տարի, ժամկետով:

Նշված կարգավորման համաձայն փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցվում էր ոչ ավել, քան հինգ տարի ժամկետով, իսկ արտոնագրի կասեցման առավելագույն՝ հինգ տարվա ժամկետի ավարտը և մինչև այդ ժամկետի ավարտն արտոնագրի գործողությունը վերականգնելու մասին փաստաբանի կողմից դիմում չներկայացնելը Պալատի խորհրդի համար հիմք էր հանդիսանում փաստաբանի արտոնագրի դադարեցման հարցը

04 մարտի 2020թ.

թիվ 5/14-Լ

քննարկելու համար:

17.11.2017թ. Պալատի խորհուրդն ընդունել էր «Կասեցված արտոնագրերով փաստաբանների արտոնագրերի գործողությունը դադարեցնելու հարցը քննարկելու մասին» թիվ 22/7-Լ որոշումը, որով ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի շրջանառվող նախագծով պայմանավորված՝ կասեցված և Օրենքով նախատեսված հինգ տարվա ժամկետը լրացած արտոնագրերով փաստաբանների արտոնագրերի դադարեցման հարցի քննարկումը հետաձգել էր՝ մինչև «Փաստաբանության մասին» օրենքում համապատասխան փոփոխություն կատարելու մասին օրենքի ընդունումը, բայց ոչ ուշ, քան մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը:

21.01.2020 թվականին Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կողմից ընդունվել է և **2020 թվականի փետրվարի 22-ից ուժի մեջ է մտել** «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքը*, որով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը փոփոխվել է: Կատարված փոփոխության արդյունքում արտոնագրի կասեցման առավելագույն հինգ տարվա ժամկետը հանվել է:

Ներկայում Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է. **«փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցվում է, եթե փաստաբանը ... անցել է հանրային ծառայության՝ հանրային պաշտոն զբաղեցնելու, պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով: Զբաղեցրած պաշտոնից ազատվելուց կամ ծառայությունը դադարեցվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնելու համար դիմում չներկայացվելու դեպքում փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվում է»:**

Ինչպես բխում է նշված նորմից փաստաբանի արտոնագրի գործողության կասեցման առավելագույն ժամկետը հանվել է և փաստաբանի արտոնագրի գործողությունը հանրային ծառայության հիմքով կասեցվում է հանրային պաշտոն զբաղեցնելու, պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով:

Պալատում առկա են կասեցված արտոնագրերով փաստաբաններ, որոնց արտոնագրի կասեցման 5 (հինգ) տարվա ժամկետը 2020 թվականի փետրվարի 22-ի դրությամբ ղեռնա չի լրացել և այդ փաստաբանները ներկայումս էլ շարունակում են հանրային ծառայության պաշտոն զբաղեցնել:

Պալատի խորհուրդը գտնում է, որ նշված իրավիճակում փաստաբանների արտոնագիրը՝ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի գործող խմբագրությունը հաշվի առնելով, պետք է համարել կասեցված՝ հանրային պաշտոն զբաղեցնելու, պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով, քանի որ ներկայիս կարգավորումն ունի կասեցված արտոնագրով փաստաբանի իրավական վիճակը բարելավող բնույթ:

Պալատում առկա են նաև կասեցված արտոնագրերով փաստաբաններ, որոնց արտոնագրի կասեցման 5 (հինգ) տարվա ժամկետը 2020 թվականի փետրվարի 22-ի դրությամբ արդեն իսկ լրացել է, սակայն Պալատի խորհրդի

* ՀՕ-27-Ն, ՀՀՊՏ 2020.02.12/11(1566) Հոդ.77, ընդունվել է 21.01.2020թ., ուժի մեջ է մտել 22.02.2020թ.:

17.11.2017թ. թիվ 22/7-Լ որոշման հիման վրա այդ արտոնագրերի գործողությունը չի դադարեցվել: Ընդ որում՝ նման փաստաբանների գերակշիռ մասը ներկայումս էլ շարունակում են հանրային ծառայության պաշտոն զբաղեցնել:

Արտոնագրի դադարեցման հիմքերը սահմանող Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը բլանկետային (վկայակոչող) է և համաձայն այդ նորմի՝ **փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվում է, եթե՝ ... 6) լրացել է արտոնագրի գործողության կասեցման՝ սույն օրենքի 38-րդ հոդվածով սահմանված ժամկետը:**

Հատկանշական է, որ 2020 թվականի փետրվարի 22-ից հետո Օրենքի 38-րդ հոդվածը, մասնավորապես՝ դրա 1-ին մասի 4-րդ կետն, ինչպես վերը նշվել է, այլևս ժամկետ չի սահմանում: Հետևաբար՝ այս դեպքում կարելի է արձանագրել, որ արտոնագրի կասեցման ժամկետը լրանալու հիմքով արտոնագրի դադարեցման հարց չի կարող քննարկվել՝ հաշվի առնելով նման օրենսդրական հնարավորության բացակայության հանգամանքը:

Նշված դեպքերի հետ կապված Պալատի խորհուրդը գտնում է, որ 2020 թվականի փետրվարի 22-ից հետո՝ անկախ արտոնագրի կասեցման ժամանակահատվածից, զբաղեցրած պաշտոնից ազատվելուց կամ հանրային ծառայությունը դադարեցվելուց հետո՝ 1 (մեկ) տարվա ընթացքում, փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնելու համար դիմում ներկայացվելու դեպքում փաստաբանի արտոնագրի գործողությունը ենթակա է վերականգնման:

Հաշվի առնելով վերոնշյալ դեպքերը, ինչպես նաև Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի միատեսակ կիրառման անհրաժեշտությունը՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ՝

- 1) **2020 թվականի փետրվարի 22-ի դրությամբ արտոնագրի կասեցման 5 (հինգ) տարվա ժամկետը լրացած և գործողությունը չդադարեցված արտոնագրերի, ինչպես նաև արտոնագրի կասեցման 5 (հինգ) տարվա ժամկետը չլրացած արտոնագրերի գործողությունը պետք է համարել կասեցված՝ հանրային պաշտոն զբաղեցնելու, պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով.**
- 2) **զբաղեցրած պաշտոնից ազատվելուց կամ հանրային ծառայությունը դադարեցվելուց հետո՝ 1 (մեկ) տարվա ընթացքում, փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնելու համար դիմում չներկայացվելու դեպքում փաստաբանի արտոնագրի գործողությունը պետք է դադարեցվի.**
- 3) **մինչև 2020 թվականի փետրվարի 22-ը զբաղեցրած պաշտոնից ազատված կամ ծառայությունը դադարեցված փաստաբանի նկատմամբ վերը նշված ենթակետում սահմանված 1 (մեկ) տարվա ժամկետի սկիզբը պետք է հաշվարկել 2020 թվականի փետրվարի 22-ից:**

Ինչ վերաբերվում է Պալատի խորհրդի 17.11.2017թ. թիվ 22/7-Լ որոշմանը, ապա այն պետք է ուժը կորցրած ճանաչել, քանի որ Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի փոփոխության արդյունքում 2020 թվականի փետրվարի 22-ից դադարել է նշված որոշմամբ կարգավորվող իրավահարաբերությունների

հետագա իրավական կարգավորման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 3-րդ և 5-րդ մասերի, 37-րդ հոդվածի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 34-րդ ենթակետի պահանջներով, Պալատի խորհուրդը, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. «Փաստաբանության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի միաբեկական կիրառման նպատակով սահմանել, որ՝

- 1) 2020 թվականի փետրվարի 22-ի դրությամբ արտոնագրի կասեցման 5 (հինգ) տարվա ժամկետը լրացած և գործողությունը չդադարեցված արտոնագրերի, ինչպես նաև արտոնագրի կասեցման 5 (հինգ) տարվա ժամկետը չլրացած արտոնագրերի գործողությունը համարվում է կասեցված՝ հանրային պաշտոն զբաղեցնելու, պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ գտնվելու ժամկետով.**
- 2) զբաղեցրած պաշտոնից ազատվելուց կամ հանրային ծառայությունը դադարեցվելուց հետո՝ 1 (մեկ) տարվա ընթացքում, փաստաբանի արտոնագրի գործողությունը վերականգնելու համար դիմում չներկայացվելու դեպքում փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցվում է.**
- 3) մինչև 2020 թվականի փետրվարի 22-ը զբաղեցրած պաշտոնից ազատված կամ ծառայությունը դադարեցված փաստաբանի նկատմամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված 1 (մեկ) տարվա ժամկետի սկիզբը հաշվարկել 2020 թվականի փետրվարի 22-ից:**

2. Ուժը կորցրած ճանաչել «Կասեցված արտոնագրերով փաստաբանների արտոնագրերի գործողությունը դադարեցնելու հարցը քննարկելու մասին» Պալատի խորհրդի 17.11.2017թ. թիվ 22/7-Լ որոշումը:

3. Հանձնարարել Պալատի խորհրդի քարտուղարին՝ սույն որոշումը հրապարակել Պալատի կայքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

04 մարտի 2020թ.
թիվ 5/14-Լ
ք. Երևան